

Թեան եւ ծաղկելուն օգնել ըստ հանգամանաց եւ բոտանիկոսից:

1, 2. Ս. Անտոնի Աբբայի կարգէն Մխիթարեան վանականը կարենան հաստատել Վանք մ'ի Թրիեստ իրենց ընտանիքեան համար, նաեւ Եկեղեցի կաթողիկոսայ հայ ծիսով՝ իրենց եկեղեցական պաշտամունքը կատարելու համար:

3. Ար վկայներ Թէ պատրաստ ենք տալու կամ տալ տալու ինչ արքունական կամ հասարակաց ստացուած տեղ որ յարմար տեսնեն յիշեալ եկեղեցին ու վանքը շինելու:

4. Եւ որովհետեւ առ այժմ Սրբոց Մարտիրոսաց բուռած եկեղեցւոյն կից տուն մ'իրբեւ առժամանակեայ իրենց վանական կայարան բրած են, թոյլ կուտանք որ յիշեալ եկեղեցւոյն մէջ իրենց հոգեւոր պաշտամունքն անխափան կատարեն, սակայն այն թէւնութեամբ զոր նոյն բոլոր վանականը ազատակամ յանձն առած են, այսինքն որ իրենց կ'իյնայ հիմնական հոն գանձուող դեկատուց եւ սուրբ անօթոց պահպանութեան ինչպէս նաեւ եկեղեցւոյն յաւորեայ ծախքը:

5. Նոյն Մխիթարեան վանականաց իշխանութիւն կու տանք Թրիեստ վանական Միաբանութիւն մը կացուցանել, որուն կառավարութեան եկեղեցական, քաղաքական եւ անտեսական գործերը յետոյ Մեր արքունական հասանութիւնը եւ հաստատութիւնը պիտի ընդունին:

6. Նոյնպէս իշխանութիւն կու տանք իրենց Միաբանութեան Մեծաւոր կամ Աբբայ ընտրելու Միաբանութեան կանոններէն որոշուած կերպին եւ արտօնութեանց համեմատ:

7. Միաբանութիւնը կարենայ այնչափ քահանայ, նորրեմայ, ուսանող եւ աշխատաւոր եղբայր առնուլ, որչափ որ վանքին, եկեղեցւոյ, տպարանին, դպրոցաց եւ ազգին համար կարեւոր կամ օգտաւէտ ըլլայ:

10. Հրապարակական-քաղաքական խնդրոց վրայ Մեր Առեւտրական վարչութեան կ'իյնայ անընդմիջապէս եւ բացարձակապէս տեղեկանալ եւ որոշում ընել:

11. Տնտեսական նիւթերու մէջ վանականը իրենց կանոնաց եւ սովորութեանց հետեւին, որոնց պահպանութեան համար, երբ իրենց կողմանէ խնդրուի, Մեր Առեւտրական վարչութիւնը պէտք եղած ձեռնտուութիւնը պիտի ընէ:

12. Միաբանութեան իշխանութիւն կու տանք իրենց ազգէն տղաք առնելու եւ պահելու զիրենք կաթողիկոսեայ կրօնի, ողջամիտ բարոյականի եւ գիտութեանց մէջ ըստ իրենց տուած յայտարարութեան կրթելու եւ ուսուցանելու համար:

13. Այս վախճանաւ իրենց դպրոցներն ո՛չ միայն Միաբանութեան նորրեմայք, տղաք ու քահանայացուք այլ նաեւ աշխարհական ազգայինք անխտիր կրնան ուսում առնուլ:

14. Թրիեստեան Միաբանութիւնը կարենայ հաղորդութիւն ու թղթակցութիւն ունենալ իւր ուրիշ Միաբանութեանց հետ. եւ իւր եկեղեցական եւ տրնտեսական օգտին համար ազատ է անձ մը մէկ վանքէն ուրիշ վանք փոխադրելու:

15. Նոյնպէս ազատ է Միաբանութիւնն՝ յանձն առած թէւնութեանց եւ պարտաւորութեանց համեմատ որոշել առաքելներ յԱրևելայ, եւ յետ կոչել զնոսա ի Թրիեստ, յայտնելով որ մասնաւոր հաճութեամբ կը տեսնենք Միաբանութեան փոյթն ու եռանդն յիշեալ առաքելական պաշտաման մէջ, եւ առաքելոց ու առաքելութեանց պէտք եղած դրամական տուչութիւններն եւ օժանդակութիւններն ո՛չ արցոց եւ ո՛չ խնդրոց ենթակայ պիտի ըլլան:

16. Միաբանութեան քահանայք, տղայք, նորրեմայք եւ աշխատաւոր եղբայրք ի Թրիեստ եւ Մեր տէրութեան բոլոր զաւառներու մէջ Մեր հպատակները պիտի համարուին:

17. Այն անձինք որ գիտութեամբ եւ հաւանութեամբ Միաբանութեան օտար երկիր կ'երթան կամ օտար երկրէ կ'անցնին, Մեր Առեւտրական վարչութեան անցագիր պիտի ընդունին, որով իրբեւ Մեր հպատակները պիտի անցնին եւ իրբեւ այնպիսիք Մեր գետպանաց եւ պաշտօնէից պաշտպանութիւնը պիտի վայելեն:

18. Նժանապէս իրբեւ Մեր հպատակները պիտի նայուին այն աշխարհական ազգայինք որ իրենց ընտանեզնի ի Թրիեստ հաստատուած են եւ Մեր առեւտրական վարչութեան օրինաւորապէս իմացուցած են. եւ այս վարչութեան անցագիր պիտի տրուի այն անձանց որ օտար երկիր երթալու կամ օտար երկրէ անցնելու առիթ ունին, երբ վերադառնան Թրիեստ դառնալ է մտքերնին:

19. Բոլոր հայ ազգք եւ մասնաւորաբար վաճառականները պիտի վայելեն ի Թրիեստ այն ամէն արտօնութիւններն ու ապտուութիւններն, զոր նոյն Ազատ նաւահանգստին մէջ հաստատուած Մեր ուրիշ հպատակները կը վայելեն:

20. Օրինաւոր եւ վաւերական կը հրատարակենք որ եւ իցէ ժառանգութիւն եւ պարգեւատուութիւն եւ հիմնարկութիւն որ օրինաւոր կերպով ձեռնուած ըլլայ եթէ ազգայիններէն, եթէ օտար տէրութեանց հպատակներէն, եւ եթէ Մեր հպատակներէն ի շնորհս վանքին, եկեղեցւոյն, տպարանին, դպրոցաց եւ Միաբանութեան ուրիշ ձեռնարկութեանց. եւ զայս մինչեւ 30 տարի, եթէ նաեւ Մեր օրինաց ի նպաստ Բրեւոյ որոշեալ գումարէն աւելի ալ ըլլայ, եւ բացայայտ կը ծանուցանենք որ ամենեւին պայմանաժամ մը չորոշելով ընդ միշտ օրինաւոր եւ վաւերական կը ծանցանք Արևելքէն կամ ուրիշ օտար տեղէ Միաբանութեան եկած ժառանգութիւնները, պարգեւատուութիւններն եւ հիմնարկութիւնները:

21. Թրիեստ հաստատուած հայազգի ընտանիք կրնան ազատօրէն ստանալ եւ անվրդով վայելել անշարժ եւ շարժական ստացուած: Նկատմամբ Մխիթարեան Միաբանութեան, որպէս զի անշարժ ստացուած ստանայ, Մեր բարձրագոյն հաւանութիւնը պէտք է զոր ներկայ հրամանագրովս կու տանք իրեն Միաբանութեան Յիսուսեան Ընկերութեան ի Թրիեստ ունեցած ստացուածքը գնելու համար:

22. Եւ եթէ Մեր տէրութեան ուրիշ մէկ գաւառէն, շարժական կամ անշարժ ստացուածք ինչայ Միաբանութեան կամ Թրիեստ եղող հայազգի ընտանեաց, ժառանգութեամբ, պարգեւատուութեամբ, կտակով կամ ուրիշ որեւիցէ հետեւին, կը շնորհենք որ կարենան դանձր ծախել եւ անոնց արժէքն ի Թրիեստ բերել. սակայն

23. Եթէ ասոր հակառակ նոյն ստացուածները չեն ծախեր, Մեր գաւառներուն մէջ նոյն ստացուածքը մինակ այն արոց եւ իրաւանց տաք կ'իյնան եւ պիտի ինան՝ որոնց ենթակայ են Մեր ուրիշ կրօնական եւ աշխարհական հպատակաց անշարժ եւ շարժական ստացուածքը:

24. Ար շնորհենք Միաբանութեան իշխանութիւն ի Թրիեստ հայ եւ հռոմայեցի գրով Տպարան մը հաստատելու:

25. Հռոմայեցի գրով լատիններէն կամ իտալերէն լեզուաւ տպուած գրքերն ենթարկեալ են կանոնաւոր քննութեան, որ յամենայն դէպս Մեր վարչութեան գործն է:

26. Իսկ հայերէն լեզուաւ ու գրով տպուած գրքերը պիտի քննուին այն Մխիթարեան վանականէն որուն յանձնուած ըլլայ Միաբանութեան կողմանէ հայերէն գրոց հաւատարիմ Քննչի պաշտօնը:

27, 28. Մխիթարեան Միաբանութեան արտօնութիւն կը շնորհենք որ մինակ ինք կարենայ Թրիեստ հայերէն գիրք տպել. եւ զայս մինչեւ 30 տարի, Մեր վերին իշխանութեան վերապահելով սոյն շնորհաց կրկին հաստատութիւնը:

29. Միաբանութեան Թրիեստ տպած գրքերը կրնան Թրիեստ հրապարակաւ ծախուիլ եւ խաւրով ընդ ծով եւ ընդ ցամաք. հայերէն գրքերը կրնան մուծուիլ եւ հրապարակաւ վաճառուիլ Մեր տէրութեանց մէջ, առաքման եւ վաճառման տուրքերն հատուցանելու պայմանաւ, բաւական որ այսպիսի վաճառմունք երրորդի մ'իրաւանց դէմ չըլլան:

30, 31. Մխիթարեան վանականը իրենց կամ ազգային եկեղեցւոյն մէջ ազատաբար գործադրեն ժողովրդապետական իրաւաբանութիւն ազգայնոց վրայ՝ այն ամենայն արտօնութեամբ որոնք յատուկ են ժողովրդապետաց. կատարեն նոյն եկեղեցւոյն մէջ հրապարակաւ